ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ կրթության տեսչական մարմնի (ԿՏՄ) կառավարման խորհրդի նիստի

ք. Երևան **25 հունվարի 2023թ.**

Ժամը 16^{00}

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստին ներկա էին՝

Ժ. Անդրեասյանը	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Դանիելյանը	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող
Լ. Բալյանը	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյանը	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Մ. Թադևոսյանը	- «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ
Բ.Փափազյանը	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն
Ա.Բախշյանը	- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

<u>Բացակայում էին՝</u>

Ռ. Գևորգյանը	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Հակոբյանը	- «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

<u>Մասնակցում էին՝</u>

Ռ. Գալստյանը	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարին փոխարինող
Լ. Մաթևոսյանը	- ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ
Ա. Գևորգյանը	- Խորհրդի քարտուղար
Ա. Հայրումյանը	- Խորհրդի քարտուղարության անդամ

Հրավիրվածներ՝

Ա. Սվաջյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Ն. Հովհաննիսյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Զ. Միքայելյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին

Հարց 2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու մասին

Հարց 3. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու մասին

Հարց 4. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 3-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու մասին

Հարց 5. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու մասին

Հարց 6. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021-2022 թվականների 1-4-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատականին հավանություն տալու մասին

Հարց 7. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվության հավանություն տալու մասին

Հարց 8. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2022 թվականի 2-րդ կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվության հավանություն տալու մասին

Հարց 9. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2023-2025 թվականների ռազմավարական ծրագրի նախագիծը հաստատելու մասին

Հարց 10. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներկայացված լրացումները և փոփոխությունները հաստատելու մասին

Հարց 11. Այլ հարցեր (Հանրության հետ կապերի բաժնի մասնագետի (ծածկագիր՝ 68-27.5-Մ7-1) պաշտոնը գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 68-27.5-Մ2-1) պաշտոնով փոխարինելու մասին):

Նիստը վարում էր կառավարման խորհրդի նախագահ **Ժ. Անդրեասյանը:**

Նախագահողի առաջարկով խորհուրդը քվեարկությամբ՝ **7 կողմ ձայնով** (միաձայն) հաստատեց օրակարգը և հանեց 9-րդ հարցը՝ հետագայում դրան անդրադառնալու նկատառումով:

Օրակարգի առաջին հարցով Ռ. Գալստյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ամփոփ հաշվետվությունը (որի ամբողջական տարբերակը նախապես ներկայացվել էր խորհրդի բոլոր անդամներին)՝ ըստ գործունեության 2022 թվականի տարեկան ծրագրով նախատեսված գործառույթների, գործունեության ծրագրով սահմանված թիրախների և արդյունքների վերլուծության, հաշվետու ժամանակահատվածում իրականացված վերահսկողական և կանխարգելիչ (իրազեկման, խորհրդատվական) միջոցառումների, իրականացված կրթական աջակցության ծրագրերի և այլ գործառույթների: Ներկայացվեցին նաև ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին առաջարկները (բովանդակությունը, նպատակը) և այլ գործառույթներ:

Լ. Մաթևոսյանը հակիրճ ներկայացրեց **օրակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ հարցերը՝** ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների կատարողականների գնահատումը, գնահատման արդյունքների համեմատական պատկերը, ինչպես նաև **7-րդ և 8-րդ հարցերը՝** ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2022 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակներում իրականացրած աշխատանքները՝ ըստ բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների:

Քննարկման ընթացքում խորհրդի անդամները հնչեցրին կրթության որակի բարձրացմանը և տեսչական մարմնի գործունեության արդյունավետությանն ուղղված կարծիքներ, ներկայացվեցին առաջարկություններ:

Ամփոփելով նիստը, **Ժ. Անդրեասյանը** ներկայացրեց կառավարման խորհրդի հանձնարարականները՝ ուղղված ՀՀ կրթության տեսչական մարմնին:

Խորհուրդը հանձնարարեց՝

1. Որակի ապահովման բաժնին՝

1) Տեսչական մարմնի գործունեության ընթացքում բացահայտված ռիսկերի, խնդիրների վերաբերյալ նախնական քննարկումներ կազմակերպել տեսչական մարմնի մյուս ստորաբաժանումների հետ և ներկայացված դիտարկումների, ստացված արձագանքների և չպարզաբանված խնդիրների վերաբերյալ Խորհրդին ներկայացնել ամփոփ տեղեկանք:

2. Տեսչական մարմնին՝

1) ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից մշակված՝ կրթական գործընթացի գնահատման գործիքակազմը (ձևաթղթերը) քննարկել համապատասխան մարմինների (ԿԶՆԱԿ, ԳԹԿ) հետ, կիրառվող գործիքակազմը համադրել ԿԳՄՍՆ մշակած գործիքակազմի հետ՝ գնահատման չափանիշների միասնականությունը և համադրելիությունը ապահովելու նպատակով:

2) Գույքագրել հանրակրթության կառավարման համակարգում կատարված օրենսդրական փոփոխությունները (իրավական ակտերի ցանկը) և ընթացակարգերը, որոնք բխում են օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունից, և «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» օրենքի նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ և դրանց վերաբերյալ Խորհրդին ներկայացնել առաջարկություններ:

3. Խորհրդին բանավոր ներկայացվող (այդ թվում՝ տեսասահիկով) փաստաթղթերի տևողությունը սահմանել 7-ից 10 րոպե:

Ժ. Անդրեասյանը առաջարկեց քվեարկել օրակարգի 1-ին, 6-րդ, 7-րդ, 8-րդ հարցերին հավանություն տալու և 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ հարցերը հաստատելու օգտին:

Խորհուրդը՝ 7 կողմ ձայներով հաստատեց և հավանություն տվեց օրակարգով հաստատված վերոնշյալ հարցերին:

Խորհուրդը առաջարկեց 11-րդ հարցը (Հանրության հետ կապերի բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 68-27.5-Մ6-1) պաշտոնը փոխարինել առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 68-27.5-Մ4--) պաշտոնով) ներկայացնել հաջորդ նիստին՝ համապատասխան ֆինանսական հիմնավորումներով:

Խորհուրդը որոշեց՝

1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2022 թվականի տարեկան հաշվետվությանը, պայմանով, որ կկատարվեն համապատասխան տեխնիկական շտկումներ՝ ըստ Ա. Դանիելյանի ներկայացրած առաջարկությունների:

2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը:

3. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

4. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 3-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

5. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2022 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

6. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2021-2022 թվականների 1-4-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատականին:

7. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2022 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությանը:

8. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2022 թվականի 2-րդ կիսամյակում իրականացրած աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությանը:

9. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներկայացված լրացումները և փոփոխությունները, պայմանով, որ այն կհաստատվի ՀՀ վարչապետի համաձայնությունը ստանալով:

Կառավարման խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյան

Invalid signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ա. Գևորգյան**

ստորագրություն